

ՍԱՂՄՈՍ 131

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Մանկան պես վստահություն ՏԻՐՈՋ վրա	Պարզ վստահություն ՏԻՐՈՋ վրա	Աստծո կամքին և առաջնորդությանը խոնարհ հնազանդության քայլ	Խոնարհ վստահության աղոթք	Մանկան պես վստահություն
<u>MT ներածություն</u>				
Դավթի աստիճանների երգ				
131:1-3	131:1	131:1-2	131:1-3	131:1-3
	131:2	131:3		
	131:3			

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻՎԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
 ՀՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

<p>NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 131:1-3</p> <p>¹Ո՛վ ՏԵՐ, իմ սիրտը գոռոզ չէ, Եվ իմ աչքերը վերից չեն նայում, Ո՛չ էլ ես մեծամեծ բաներով եմ զբաղվում, Կամ այնպիսի բաներով, որ ինձնից խիստ բարձր են: ²Հիրավի իմ անձը հանդարտեցրի և հանգստացիր Իր մոր կաթից կտրված երեխայի պես . Իմ անձը կաթից հագեցած մանուկի պես է: ³Իսրայելը թող ՏԻՐՈՋԸ հուսա այսուհետև՝ մինչև հավիտյան:Man</p>

131:1 «ՏԵՐ» Սա Իսրայելի Աստծո ուխտի անունն է, որն առաջին անգամ կիրառվում է Ծննդոց 2:4:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Դ.

❖ **«սիրտ»** Սա երբայերեն դարձվածք է, որը նկատի ունի անձին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԻՐՏ

❖ **«հպարտ չեմ»** Սաղմոսերգուն նկարագրում է իր խոնարհ վերաբերմունքը Աստծո հանդեպ Սաղմոս 131:1-2-ում մի քանի արտահայտությունների մեջ՝

1. հպարտ՝ գոռոզ չեմ (բառացի՝ «մեծամիտ») – BDB 146, KB 170, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ

2. աչքերս վերից չեն նայում (բառացի՝ «աչքերս վեր բարձրացրած չեն») – BDB 926, KB 1202, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ
3. ես չեմ գրադվում (բառացի՝ «քայլում», BDB 229, KB 246, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ)՝
ա. մեծամեծ բաներով (BDB 152)
բ. ինձնից խիստ բարձր բաներով (BDB 810, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՔԱՆՉԵԼԻ ԲԱՆԵՐ)
4. իմ անձը հանդարտեցրի – BDB 1000, KB 1436, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ
5. իմ անձը հանգստացրի – BDB 198, KB 226, *Poel* ՎԱՂԱԿԱՏԱՐ

Հպարտ և պարծենկոտ մարդիկ ՅԱՀՎԵԻ բարկությունը ընդունողներն են (տես՝ Սաղմ. 18:27, 101:5, Սոփ. 3:11), քանի որ այն հայտնում է Ծննդոց 3-ի Անկման հետևանքները: Խոնարհությունը ցույց է տալիս հոգևոր դարձի և Աստծո հայտնության ընդունելության արդյունքը:

Իրապես մի հարց է ծագում, թե ինչ է նշանակում #3 նկարագրությունը:

1. պարզապես խոնարհության դարձվածք
2. պարզապես կախվածության դարձվածք
3. ինչ-որ մեկը, որ չի հարցադրում Աստծո մեծ գործերը
4. ինչ-որ մեկը, որ չի չարաշահում Աստծո գործությունը
5. մարդ, որը գիտի իր տեղը ամբողջական ծրագրի մեջ (տես՝ Սաղմ. 89:10):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

131:2 Սաղմոսերգուն շարունակում է նկարագրել իր խոնարհ վերաբերմունքը՝ կիրառելով երեխայի նկարագրություն: Ուշադրություն դարձրեք, որ այստեղ ՅԱՀՎԵՆ նկարագրվում է որպես մայր՝

1. Ծննդ. 1:2 – Հոգին «խնամում էր» (ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ԲԱՅ)
2. 2 Օրինաց 32:11, Ելից 19:4 – էգ արծվի գործողություններ
3. *Շաղկապ* բառը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՇԱԴԴԱՅ)
4. Եսայի 49:15, 66:9-13
5. անգամ Հիսուսը օգտագործեց իգական սեռի բնութագրություններ Իր համար – Մատթ. 23:37, Դուկաս 13:34

Ավելի շատ տեղեկություն ստանալու համար լսեք Մայրերի Օրվան նվիրված իմ քարոզը՝ «Աստծո իգականությունը», առցանց տարբերակով, երկրորդ կանաչ պատուհան, #111, www.freebiblecommentary.org

❖ «**անձ**» Սա *nephesh* (BDB 659) է, մի կերպ, որով անդրադառնում է ամբողջ անձին, ինչպես «սիրտը»: Տես Ծննդ. 35:18-ի ամբողջական գրառումը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . NEPHESH

131:3 Սաղմոսերգուն կիրառում է իր սեփական խոնարհ սիրտը և խաղաղ հույսը, վստահությունը, համբերությունը (BDB 403, KB 407, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 130:5,6,7) քաջալերելու Իսրայել ազգին:

❖ «**Ո՛վ Իսրայել**» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԻՍՐԱՅԵԼ (անունը)

❖ «**այսուհետև՝ մինչև հավիտյան**» Այս երբայերեն դարձվածքը կիրառում է երեք բառ, որոնք սկսում են *v* տառով (տես՝ Սաղմ. 113:2, 115:18, 121:8, 125:2):

1. BDB 773 – ՄԱԿԲԱՅ՝ ներկա ժամանակի համար (այսինքն՝ առաջին արտահայտությունը)
2. BDB 723 III – ՆԱԽԴԻՐ
3. BDB 761 – ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, *'olam*

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՀԱՎԻՏՅԱՆ ('olam):